

Մանուկներու Սուրբ Գիրքը
կը ներկայացնէ



Նոյը եւ Մեծ
Զրիեղեղ



Written by: Edward Hughes

Illustrated by: Byron Unger; Lazarus

Adapted by: M. Maillot; Tammy S.

Translated by: Most Rev. Prof. Varant Zareh Seropian

dedicated to my Son Lordling Zareh Varant

funded by: Zareh Seropian & Sons Foundation

special thanks: to my wife

gifted to all the Armenian children around the world. This translation
has been done in the Grace of the Holy Trinity to whom I owe.

Produced by: Bible for Children

www.M1914.org

©2012 Bible for Children, Inc.

License: You have the right to copy or print this story,
as long as you do not sell it.



Նոյը Աստուածապաշտ մարդ
մըն էր: Մնացեալ մարդիկը
կ'ատէին եւ անհնազանդ
էին Աստուծոյ: Օր մը
Աստուած սարսափելի
բան մը ըսաւ. "Ես պիտի

կործանեմ
այս չար
աշխարհը",
ըսաւ Աստուած
"Միայն քու
ընտանիքդ
պիտի
ազատուի":



Աստուած զգուշացուց Նոյին ըսելով, որ մեծ ջրհեղեղ պիտի գայ եւ ծածկէ ամբողջ աշխարհը: "Մեծ տախտակէ տապան մը շինէ, որ մէջը բաւէ քու ընտանիքդ եւ անասունները" հրամայեց Նոյին: Աստուած Նոյին տուաւ ճշգրիտ ցուցմունքները.

Նոյ գործի
անցաւ:





Ժողովուրդը Նոյին վրայ
կը ծիծաէին երբ Նոյ
անոնց կը բացատրէր,
թէ ինչու կը
շինէ այս
նաւը:


Նոյ
շարունակեց
շինել: Ան
նաեւ շարունակեց
ժողովուրդին խօսիլ
Աստուծոյ մասին:
Ոեւէ մէկը մտիկ
չէր ըներ անոր:



Նոյ մեծ հաւատք
ունէր: Ան Աստուծոյ կը
հաւատար թէւ տակաւին
անձրեւ չէր տեղացած
ատկէ առաջ: Արդէն նաւը
պատրաստ էր եւ պէտք
էր մէջը ապրանքները
լեցնել:



Հիմա հասան անասունները:




Աստուած կարգ մը անասուններէն եօթական բերաւ
եւ ուրիշներէն երկուքական մեծ եւ պզտիկ թռչուններ,
պզտիկ եւ երկարահասակ գազաններ բոլորն
ալ դէպի տապան կ'ուղղուէին:



Թերեւս ժողովուրդը անարգական
խօսքեր կ'ուղղէր Նոյին երբ անասունները
կ'առաջնորդէր դէպի Նաւ: Անոնք երբեք
չէին դադրէր Աստուծոյ դէմ մեղք
գործելէ: Անոնք չէին խնդրէր
տապանին մէջ մտնել:






Վերջապես
ամեն
անասունները
եւ թռչունները
նաւ ելան:



"Տապան ելիր" հրաւիրեց
Աստուած Նոյին


"Դուն եւ քու
ընտանիքդ":
Նոյ, իր կինը,
իր երեք
տղաքը իրենց
կիներով մտան
տապան, յետոյ
Աստուած գոցեց
տապանին
դուռը:





Ետքը անձրեւ
սկսաւ: Սաստիկ
ջրհեղեղ, որ
աշխարհը ծածկեց,
քառասուն օր եւ
քառասուն գիշեր:






Ջրհեղեղին
ջուրերը ծածկեցին
քաղաքները եւ գիւղերը: Երբ
անձրեւը դադարեցաւ նոյնիսկ լեռներ
ջուրերով ծածկուած էին: Ամէն
ինչ որ օդ կը շնչէր մեռած էր:



Ջուրերը երբ բարձրացան,
տապանը կը ծփար անոր
երեսը: Կրնար ըլլալ, որ
ներսը մութ էր, թերեւս
անհանգիստ, եւ թերեւս
ալ վախնալիք: Սակայն
տապանը պաշտպանեց
նոյր ջրհեղեղէն:



Յինգ ամիս ջրիեղեղէն ետքը
Աստուած չոր հով դրկեց: Կամաց-
կամաց տապանը հանգչեցաւ
Արարատ լեռան գագաթը:



Նոյ ագռաւ մը եւ աղաւնի մը արձակեց տապանին
պատուհանէն: Աղաւնին չգտած ըլլալով չոր
ցամաք հանգչելու համար ետ դարձաւ Նոյին:






ՄԵԿ շաբաթ ետք Նոյ
Նոյն փորձը կրկնեց: Այս
անգամ աղաւնին դարձաւ
կտուցովը ձիթապտուղի
տերեւ բռնած: Յաջորդ
շաբաթը Նոյ գիտցաւ, որ
աշխարհը չոր է, որովհետեւ
աղաւնին ետ չդարձաւ:




Աստուած ըսաւ Նոյին, որ
տապանեն դուրս գալու ատենս
Է: Նոյ եւ իր ընտանիքը սկսան
տապանը պարպել
անասուններէն:




Նոյ շատ
շնորհակալ էւ
երախտապարտ
կը զգար: Ան
խորան մը շինեց
եւ սկսաւ պաշտել
Աստուծոյ, որ ազատեց
իրեն եւ իր ընտանիքը
սարսափելի
ջրհեղեղէն:






Աստուած
Նոյին
հրաշալի
բան մը
խոստացաւ:

Ան խոստացաւ
նորէն ջրհեղեղ
չըրկել, որ
մարդկութիւնը
դատէ իրենց
մեղքերուն համար:





Վերյիշեցնելու
համար իր
խոստումը
Աստուած մեծ
նշան մը տուաւ:

Ծիածանը
Աստուծոյ
նշանն էր
իր խոստումին:



Ջրհեղեղեն
ետք Նոյ եւ իր
ընտանիքը նոր սկիզբ մը
սկսան: Ժամանակ մը ետք
Նոյի որդիները եւ անոնց
որդիները լեցուցին
աշխարհը:



Բոլոր
երկիրները
եկա՞ծ են Նոյէն
եւ անոր բոլոր
զաւակներէն:



Նոյր եւ Մեծ Ջրհեղեղ

Աստուծոյ խօսքէն պատմութիւն մը,
Սուրբ Գիրքը:

Կը գտնուի հետեւեալին մէջ

Ծննդոց 6-10

"Քու խօսքիդ մուտքը լոյս կը ցոլացնէ:"
Սաղմոս 119:130



վերջ



Այս Սուրբ Գիրքի պատմութիւնը մեզի կը պատմէ մեր հրաշալի Աստուծոյ մասին, որ մեզ ստեղծեց եւ կ'ուզէ, որ մենք զինք ճանչնանք:

-Աստուած գիտէ, թէ շատ գէշ բաներ ըրած ենք, որոնք Ինք մեղք կը կոչէ: Մեղքին պատիժը մահն է, սակայն Աստուած այնքան մեզ կը սիրէ, որ Իր Որդին Յիսուսը մեզի դրկեց, որպէսզի Խաչին վրայ մեռնի եւ մեր մեղքերուն համար պատժուի: Ետքը Յիսուս համբարձաւ եւ դրախտ՝ իր տունը բարձրացաւ: Եթէ կը հաւատաս Յիսուսին եւ իրմէ կը պահանջես որպէսզի ներէ քեզի քու մեղքերուդ համար, Ան կը ներէ: Ան կու գայ եւ մէջդ կը բնակի իսկ դուն յաւիտեան Իր հետ:

Եթէ կ'ուզես մեղքերդ ազատիլ, հետեւեալը ըսէ Աստուծոյ: Տեր Աստուած ես կը հաւատամ, որ Յիսուս մահացաւ ինձի համար եւ հիմա Ան անգամ մը եւս կ'ապրի: Կ'աղաչեմ, որ գաս իմ կեանքիս մէջ եւ ներես բոլոր մեղքերս, որպէսզի կարենամ նոր կեանք մը ապրիլ, եւ օր մը հետդ ըլլամ, յաւիտեան: Օգնէ ինձի որպէսզի քեզի համար ապրիմ քու որդիիդ պէս: Ամէն:

Կարդայ Սուրբ գիրքը եւ ամէն օր Աստուծոյ հետ խօսիր:
Յովհաննու 3:16

